Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

«25» 10. 2021թ. *ք. Մասիս*

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Արտյոմ Մարկարյանս՝ ուսումնասիրելով 02.06.2020թ. հարուցված թիվ 06233207 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1.ՀՀ ՊԵԿ ՀՄ-ի կողմից <<16>> հունվար 2020թ. կայացված թիվ 401-Ա որոշման համաձայն. Պետք է՝ ***Սեվակ Բադալյանից*** *հօգուտ ՊԵԿ-ի բռնագանձել 2.024.785 ՀՀ դրամ և փոկոսները: Պարտապանից բռնագանձել նաև ընդհանուր գումարի 5 փոկոսը՝ որպես կատարողական ծախսի գումար:*

09.08.2021թ.-ին ,,Արմէքսպերտիզա,, ՍՊԸ-ից ստացված թիվ 13/728/21 եզրակացության հիման վրա պետք է պարտապան Սեվակ Բադալյանի անշարժ գույքը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Սեվակ Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը.

հ/հ	լոտի անվանումը, նկարագիրը	գնահատման գինը /դրամ/	մեկնարկային գինը /դրամ/	գույքի քանակը
1	**Արարատի մարզ; Զորակ համայնք Անդրանիկի փ.,թիվ 89 կադաստրային ծածկագիր 03-044-054-012**	**2.500.000 ՀՀդրամ**	**1.875.000 ՀՀ դրամ**	**1 հատ**

ներկայացվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ ***harkadir.ajurd.am*** *միջոցով:*

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ ***«14» 12. 2021թ.***

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանի կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից երկամսյա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ Ա Ց Ն Ե Լ . Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի